ՆԱԽԱՐԱՐՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՍԻՄՈՆ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

Հին Հայաստանում նախարարական հաստատությունը սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի կազմակերպման կարևորագույն ձևն էր՝ իր որոշակի բովանդակությամբ, որի զարգացումը համընթաց է եղել հայկական ամբողջ հասարակության զարգացմանը։ Ուստի և բնական է, որ հին Հայաստանի պատմությամբ զբաղվողները այս կամ այն չափով անդրադարձել են նախարարական կազմակերպության հարցերին։ Բոլորի մեջ, սակայն, առանձնանում են Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի ուսումնասիրությունները[1]։

Ն. Ադոնցը հիմնականում նպատակ ունենալով պարզել հայկական ֆեոդալիզմի ծագման հարցը, խորամուխ է եղել հայկական նախարարությունների քանակական և որակական վերլուծությանը։ Ընդ որում, նա ենթադրում է, որ ֆեոդալական հարաբերությունները Հայաստանում առաջացել են դեռևս Արտաշեսյանների ժամանակ, իսկ վերջնականապես ձևավորվել են Տրդատ Ա-ից հետո։ Սակայն Ն. Ադոնցը նախարարական կազմակերպությունը Հայաստանում դիտում է որպես իշխանության բաժանում, այսինքն՝ սոսկ իբրև վերնաշենքային երևույթ։

Հ. Մանանդյանը, իր հերթին, քննության ենթարկեց Հայաստանում նախարարական կազմակերպությունն իր ուրույն բովանդակությամբ և էական առանձնահատկություններով։ Հայաստանի ֆեոդալականացման սկիզբը Հ. Մանանդյանը, ի տարբերություն Ն. Ադոնցի, ենթադրում է Արտաշեսյան թագավորության հաստատումից էլ առաջ, միաժամանակ նշելով, որ «...ֆեոդալիզմի ծագման ամենահին այդ շրջանի մասին մենք չունենք որոշ ու հաստատուն վկայություններ։ Աղբյուրների տեղեկությունները վերաբերում են, գլխավորապես, զարգացած ու հարդարված նախարարական կարգերին, որ վերջնականապես ձևակերպվել էին Արշակունյաց թագավորության հաստատման ժամանակ»[2]։

Նախարարական կազմակերպության մասին մեր հիմնական աղբյուրներն են Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Կորյունը, Եղիշեն, Ղազար Փարպեցին։ Վերջին երեքի վկայությունները գերազանցապես վերաբերում են մարզպանական շրջանին, երբ վերացել էր հայոց թագավորությունը և երկիրը գտնվում էր պարսկական տիրապետության տակ. ուստի և մենք, հիմնականում, կանդրադառնանք առաջինների վկայություններին։

«Նախարար» բառին հայագետները տարբեր մեկնություններ են տվել։

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб, 1908, Հ. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934։

[2] Հ. Հ. Մանանդյան, նույն տեղում, էջ 10—11։

Ղ. Ինճիճյանն այդ մեկնել է որպես նախ և արար (praefectus)[3]։ Ն. Մառի կարծիքով, բառի սկզբնական ձևը եղել է նաեարար, որը նշանակում է «երկրի տեր, գլխավոր»[4]։ Այս կարծիքն ընդունել են Ն. Ադոնցը, Ստ. Մալխասյանցը, Հ. Մանանդյանը և ուրիշներ[5]։ Հենվելով Վ. Հեննինգի մի աշխատության վրա[6], Ա. Փերիխանյանը գտնում է, որ հայերեն «նախարար» տերմինը պարթևական փոխառություն է և նշանակում է՝ «նա, ով ունի իշխանություն, առաջին տեղը, պետ»[7]։

Հայկական նախարարությունների ծագման մասին խոսելիս, հայագետները հենվում են Մ. Խորենացու «Հայոց Պատմության» Բ գրքի 7-րդ և 8-րդ գլուխների վրա, որոնցում պատմվում է, թե Վաղարշակը, որը, ըստ Մ. Խորենացու, Հայաստանում Արշակունյաց հարստության հիմնադիրն է, երկրում հաստատում է կառավարչական նոր կարգեր։ Պատմահայրը հականե-հանվանն նշում է չորս տասնյակ նախարարների և նախարարական սերունդների, որոնց հաստատում է Վաղարշակ թագավորը։

Նախարարական հաստատության վերաբերյալ տվյալները հանրագումարելիս, ուրվագծվում է այնպիսի մի պատկեր, որի համաձայն հայկական թագավորության շուրջ 700-ամյա գոյության ընթացքում այդ հաստատությունը գրեթե անփոփոխ գոյություն է ունեցել իր ծագումից մինչև վերջ՝ Արշակունյաց թագավորության վերացումը։

Անկասկած, առաջին հայ մատենագիրները հարազատորեն պատկերել են IV—V դդ. Հայաստանում նախարարական հաստատությունը որպես ժառանգական խոշոր հողատիրական սիստեմ, որի պայմաններում խոշոր հողատերը միաժամանակ ժառանգաբար վարում էր այս կամ այն պետական պաշտոնը։

Արշակունյաց թագավորության վերջին շրջանում նախարարական կազմակերպության մասին եղած այս պատկերացումները ուսումնասիրողները մեխանիկորեն վերագրել են նաև առավել վաղ շրջանին, որը, սակայն, չի համապատասխանում պատմական իրականությանը։ Բոլոր դեպքերում նախարարական կազմակերպության առկայությունը Հայաստանում հայտանշում է իշխանության որոշակի բաժանում թագավորի և նրան շրջապատող վերնախավի միջև։

Հին Հայաստանում իշխանության ինչ-որ բաժանում նկատելի է դեռևս մ. թ. ա. VI դ. կեսերին։ Քսենոփոնի «Կյուրոպեդիա»-ում խոսվում է հայոց մեծամեծների մասին, որոնց դերը, սակայն, այնքան էլ պարզ չի երևում։ Առա-

---

3 Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Բ, Վենետիկ, 1835, էջ 77, Н. Эмин, История Армении Моисея Хоренского, М., 1893, стр. 298.

4 Н. Марр, Этимология двух терминов («Записки восточного отделения императорского русского археологического общества», т. XI, СПб., 1898, стр. 170).

5 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 451, Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1940, էջ 255, ծան. 3, Հ. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 33, Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. է, Երևան, 1935, էջ 170։

6 W. B. Henning, A New Parthian Inscription („Journal of the Royal Asiatic Society", 1955. fasc. 3—4, pp. 132—136).

7 А. Г. Перихаян, Древнеармянские востаники («Вестник древней истории», 1956, № 2, էջ 49—50), Գ. Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962, էջ 9, ծան. 1։

վել պարզ է արքայորդի Տիգրանի դերը, որը Կյուրոսի արշավանքներին մասնակցող հայկական զորամասերի հրամանատարն է։ Իշխանության որոշակի բաժանում նկատելի է սատրապական Հայաստանում։ «Անաբասիս»-ի տվյալներով, սատրապ Օրոնտասի կողքին կան նաև հյուպարքոս Տիրիբազոսը, զորապետ Արտուխասը (Արտաշես—Ս. Կ.) և գեղջավագները։ Իշխանության ինչոր բաժանում կարելի է տեսնել նաև Հայաստանում սատրապական շրջանի վերջին տարիներին Օրոնտասի և Միթրաուստեսի միջև, որոնք Գավգամելայի ճակատամարտում առաջնորդում էին հայկական զորամասերը. նրանցից մեկը. հավանաբար, հայկական հեծելազորը, մյուսը՝ հետևակը։

Իշխանության բաժանման առավել որոշակի տվյալներ ունենք Երվանդունիների թագավորության տարիների վերաբերյալ։ Այսպես, Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկում քրմապետ Միթրասը իրեն անվանելով արմավիրցիների թագավոր, ողջունում է թագավոր Երվանդին[8]։ Խորենացին Երվանդ թագավորի կողքին հիշատակում է նաև նրա եղբորը՝ քրմապետ Երվազին[9]։ Աղբյուրներում, ցավոք, ուրիշ տվյալներ չկան այդ տարիների Հայաստանի վարչական ու պետական որևէ այլ ղեկավար օրգանի կամ պաշտոնյայի մասին։ Աղբյուրներում նման տվյալներ փնտրելն իսկ անհեռանկար կլիներ, քանի որ Երվանդունիների հայկական թագավորությունը, հանգամանքների բերումով, սկսեց արագորեն թուլանալ և իր գոյության վերջին շրջանում անդամահատվելով, կորցրել էր իր տարածքի գգալի մասերը։ Երվանդունիների ձեռքին մնացել էին Հայկական լեռնաշխարհի կենտրոնական գավառները միայն, որոնց կառավարումը չէր թելադրում վարչական նոր մարմիններ ստեղծելու պահանջ։ Այդպիսին պետք է առաջանար միայն հետագայում, երբ Արտաշեսը և Զարեհը, Երվանդին տապալելուց հետո, հաջողությամբ ավարտեցին Երվանդյանների կորցրած երկրամասերը իրենց իշխանության տակ վերամիավորելու գործը[10]։

Հանձին Արտաշեսի ոչ միայն հայկական գահն անցնում է նոր արքայատոհմի, այլև հաստատված թագավորությունն իր էությամբ նոր պետություն էր, շատ բանով տարբեր նախորդից՝ Երվանդունիների պետությունից։ Այդ տարբերությունը պայմանավորված էր հայկական թագավորության սահմանների ընդարձակմամբ, երբ հայկական տարրերով բնակեցված հիմնական երկրամասերը ընդգրկվեցին պետական մեկ միավորման մեջ։ Փոքր նշանակություն չուներ նաև այն, որ Արտաշեսը և նրա աջակից Զարեհը նախկինում եղել էին Անտիոքոս Գ-ի նշանակած կառավարիչ-ստրատեգոսներ, այն է՝ պետական բարձր պաշտոնյաներ։

Ստրաբոնի վկայության մեջ կարելի է տեսնել նորաստեղծ թագավորության ինչ-որ վարչատերիտորիալ բաժանում առանձին անվանումներով՝ Գոդարենե, Խորզենե, Կարենիտիս, Դերքսենե, Ակիլիսենե և այլն։ Անկասկած, արդեն բավական ընդարձակ սահմաններով այդ պետությունը բաժանված էր ենթաշրջանների, որոնք, Սելևկյանների և հարևան Կապադովկիայի ու Պոնտո-

---

8 Հ. Հ. Մանանդյան, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946։

9 «Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1913, էջ 166։

10 Strabo, XI, 14, 5.

սի տերությունների ստորաբաժանումների նման և դրանց ազդեցությամբ կարող էին կոչվել ստրատեգիաներ[11]։

Օտար աղբյուրները ոչինչ չեն հաղորդում այդ միավորների կառավարիչների, ինչպես նաև Արտաշեսի պետության մեջ եղած պաշտոնյաների մասին։ Այդպիսի տեղեկություններ կան միայն Մ. Խորենացու մատյանի՝ Երվանդի ու Արտաշեսի գործունեությանը նվիրված գլուխներում։ Պատմահոր այդ վկայությունները, սակայն, դեռևս կարոտ են լուրջ ուսումնասիրության և սիստեմավորման, քանի որ նրա «Հայոց Պատմության» այս հատվածներում կան ժամանակագրական վրիպումներ ու դեռևս չհաստատված հաղորդումներ։ Այսուհանդերձ, դրանց հիման վրա այժմ իսկ հնարավոր է որոշակի ենթադրություններ անել։ Ըստ Մ. Խորենացու, Արտաշեսի կողքին և նրա արքունիքում լայն գործունեություն է ծավալում Սմբատ Բագրատունին։ Վերջինս Արտաշեսի դայակն է, նրա թագադիրը։ Մ. Խորենացին հաղորդում է, որ Արտաշեսը Սմբատին վստահում է հայոց ամբողջ զորքը, երկրի բոլոր գործակալներին և ամբողջ արքունական տունը։ Նշանակում է, որ Սմբատ Բագրատունին, եթե իսկ ամենաբարձր պաշտոնյան չէր, ապա բարձրագույն պաշտոնյաներից մեկն էր։

Առանձնակի ուշադրության է արժանի Մ. Խորենացու այն հաղորդումը, թե Արտաշեսը «տայ և առնն քաջի և պատուականի Արգամայ զխոստացեալ գահն երկրորդական»[12]։ Տվյալների սղության պատճառով մեզ համար պարզ չէ, թե արդյո՞ք այդ պաշտոնն ունեցողի տեղը իշխանության մեջ նույնն է, ինչ թագավորից հետո երկրորդ անձնավորություն հանդիսացող քրմապետի կամ ավագ բդեշխի գրաված դիրքը[13]։

Մ. Խորենացու այս վկայություններից հետևում է, որ դեռևս այդ ժամանակ Հայաստանի պետական ապարատում բարձրագույն պաշտոնները խիստ տարբերակված չէին։ Դեռ ավելին. նույն անձը կարող էր միաժամանակ զբաղեցնել մի շարք կարևոր պաշտոններ։ Տվյալ դեպքում Սմբատը թագավորի դայակն է, նրա թագադիրը, զորքերի հրամանատարը, արքունիքի վերակացուն և այլն։ Նման երևույթը աստիճանաբար վերանում է, քանի որ հետագայում, Արշակունյաց Հայաստանում, պետական պաշտոնները՝ գործակալությունները, խիստ տարբերակված էին և որոշակիորեն բաժանված տարբեր տոհմերի միջև։

Հայոց թագավորներն իրենց հատուկ ծառայություն մատուցած հավատարիմ մարդկանց վարձատրում էին՝ հանձնարարելով այս կամ այն պետական պաշտոնը։ Արտաշեսի գործունեությանը նվիրված գլուխներից մեկը Մ. Խորենացին նույնիսկ վերնագրել է այսպես. «Թագաւորել Արտաշիսի և առնել բարիս իւրոց երախտաւորացն»[14]։ Այնտեղ պատմվում է, որ Արտաշեսը Արգամին տալիս է նրան խոստացած երկրորդական գահը և այլ պատիվներ։ Ոչ պակաս պատիվներ տալիս է և Սմբատին, իսկ Գիսակի որդի Ներսեսին նախարարական աստիճանի բարձրացնելով, կոչում է Դիմաքսյան,

---

11 Strabo, XII, 1, 4; C. Plin., Naturalis Historia, VI, 9.

12 Մովսես Խորենացի, էջ 174։

13 Այս հարցի մասին մանրամասն տե՛ս Ս. Մ. Կրկյաշարյան, Բդեշխությունների առաջացումը Հայաստանում («Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1966, № 4)։

14 Մովսես Խորենացի, էջ 173։

նրա հոր քաջագործությունների անունով, որովհետև Արտաշեսի համար կռվելիս նրա դեմքի կեսը սրով կտրել էին։ Արտաշեսը նախարար է դարձնում Տուրի որդիներին այն բանի համար, որ վերջինս Երվանդին լրտեսելով օգնել էր Սմբատին և հատուցել իր կյանքով։

Աղբյուրներում տվյալներ չկան, թե հայկական թագավորության մեջ ներգրավված երկրամասերում Արտաշեսը ինչպիսի՞ պաշտոնյաներ կարգեց։ Պիտի ենթադրել, որ Արտաշեսը Սելևկյանների օրինակով երկիրը բաժանեց ստրատեգիաների, որտեղ կարգեց ստրատեգոս-կառավարիչներ։

Առավել բովանդակալից են օտար աղբյուրների՝ Տիգրան Մեծին վերաբերող հաղորդումները, որոնցից կարելի է որոշակի տվյալներ քաղել հայոց թագավորին ենթակա պաշտոնյաների մասին, որոնք, բացի Տիգրանի եղբայր Գուրասից, բոլորն էլ ներկայացված են որպես հայոց թագավորի զորավարներ։ Հետագա տարիների դեպքերը նկարագրող օտարալեզու աղբյուրներում ևս հանդիպում են հատուկենտ վկայություններ Հայաստանի պաշտոնատար անձանց մասին (Օսակես, Ադոն, Դեմոնաքս, Վասակես), որոնք նույնպես, անխտիր, զինվորականներ են։

Պաշտոնատար անձանց երկու անուն ևս հանդիպում է վիմական արձանագրություններում։ Գառնիի հունարեն արձանագրության մեջ կարդում ենք Մեննեաս անունը, որը կրել է նույն արձանագրության մեջ հիշատակված լիտուրգոսը՝ գործակալը[15]։ Մեննեաս անունը Հ. Բարթիկյանը համարում է Ամատունյաց տոհմում ընդունված Մանու կամ Մանէն անվան հունականացված ձևը[16]։ Մյուս անունը մեզ հասել է Ապարանի հունարեն արձանագրությունից, որտեղ հիշատակված է ոմն Գնթունի՝ Ռոդոմիսրի (կամ Ռոդոմիթրի) որդի, որը Տրդատ թագավորից իբրև պարգև ստացել է Նիդ քաղաքը[17]։ Ո՞վ և ի՞նչ պաշտոն ունեցող անձնավորություն էր նա, դժվար է ասել, քանի որ արձանագրությունը խիստ թերի է և աղճատված։

Տակիտոսը և Հովսեպոս Փլավիոսը, խոսելով I դ. Հայաստանի մասին, հիշատակում են հայոց աղնվականներին, մեծամեծներին, առաջիններին[18]։ Ընդհանուր բնույթ կրող այս բնորոշումները, սակայն, չեն կարող մեզ օգնել հայկական հասարակության մեջ նրանց ունեցած դիրքի մասին որոշակի գաղափար կազմելու։

Անտիկ հեղինակների վկայություններից պարզվում է, որ հայոց թագավորը տարբեր առիթներով և տարբեր ժամանակներում տարբեր մարդկանց էր նշանակում զորահրամանատար. հետևաբար, թագավորն ինքն էր հայոց զորքերի գլխավոր հրամանատարը և այդ ժամանակ դեռևս սպարապետի պաշտոնը, եթե այն գոյություն ուներ, ժառանգաբար տոհմերից մե-

---

15 К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 183 և հետո, Գ. Խ. Սարգսյան, Գառնիի հունարեն արձանագրության շուրջը (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 3, էջ 45—46), Հ. Մ. Բարթիկյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին (ՊԲՀ, 1965, № 3, էջ 233—234), Ս. Մ. Կրկյաշարյան, Եվս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին (ՊԲՀ, 1965, № 3, էջ 235—238)։

16 Հ. Բարթիկյան, նույն տեղում։

17 М. И. Ростовцев, Апаранская надпись царя Тиридата, СПб, 1911, էջ 8, К. В. Тревер, նշվ. աշխ., էջ 273—276։

18 Tacit., Annal., II, 56; XII, 44; XV, 27; Jos, Flav., Arc., Jud., 2 6 51.

կին չէր պատկանում։ Մ. Խորենացին, նկարագրելով Վաղարշակի գործունեությունը հայկական պետական ապարատի կարգավորման և տարբեր նախարարությունների հաստատման ուղղությամբ, չի հիշատակում հայոց սպարապետին և զորքերի սպարապետությունը[19]։ Այդ պաշտոնը նախապես վստահված էր Բագրատունիներին, բայց Տիգրան Միշինը վերցնում է նրանցից զորքի իշխանությունը և սպարապետ է կարգում Բարզափրան Ռշտունուն[20]։ Արտաշեսը Սմբատ Բագրատունուն է վստահում հայոց բոլոր զորքերը[21]։ Երբ Սմբատը վշտացած թողնում է հայոց զորքի իշխանությունը, Արտաշեսն այն հանձնում է իր որդի Արտավազդին[22]։ Տրդատ Գ-ը սպարապետությունը հանձնում է Արտավազդ Մանդակունուն, իբրև երախտագիտություն այն բանի, որ վերջինս փրկել էր իրեն և հասցրել հայրենի իշխանության[23]։

Սպարապետության մասին պատմահոր հաղորդած տվյալներն իմաստավորելու համար անհրաժեշտ է վերացնել Արտաշեսին վերաբերող՝ Մ. Խորենացու անախրոնիզմը և այնտեղ նկարագրված դեպքերը տանել մ. թ. ա. II դ. առաջին կեսը, այսինքն՝ այն տարիները, երբ դրանք իրոք կատարվել են։ Այդ դեպքում հեշտ է նկատել, որ հայկական միասնական թագավորության հիմնադիր Արտաշես-Վաղարշակի գահակալության շրջանում սպարապետությունը և թագադիր ատպետությունը գտնվում էին Սմբատ Բագրատունու ձեռքին։ Եթե սրան ավելացնենք այն, որ Սմբատը միաժամանակ եղել էր Արտաշեսի դայակը, ապա պարզ կլինի, թե նա ինչպիսի՞ բարձր դիրք և հեղինակություն կարող էր ունենալ պետական գործերում։

Եթե ինչ-որ չափով պարզ են հայոց սպարապետի դերն ու ֆունկցիան, ապա նույնը չի կարելի ասել մեկ այլ կարևոր պաշտոնյայի՝ հազարապետի մասին։ Հայ մատենագրության մեջ հազարապետը առաջին անգամ հիշատակվում է Աստվածաշնչում, որտեղ, սակայն, այնքան էլ հստակ չէ նրա վարած պաշտոնի էությունը։ Բանն այն է, որ «հազարապետ» բառով մեր անդրանիկ թարգմանիչները տարբեր դեպքերում թարգմանել են հունարենի տարբեր բառեր, ինչպիսիք են՝ χιλιάρχος (հազարապետ), οἰκονόμος (տան կառավարիչ, տնտես), ἐπίτροπος (կառավարիչ, տեղապահ, խնամակալ) բառերը և ὁ ἐπὶ τῆς οἰκίας (ի վերայ տանն) արտահայտությունը։

Հունա-մակեդոնացիների մոտ հազարապետը պարզապես հազար հոգուց բաղկացած զորամասի հրամանատարն էր։ Մինչդեռ Պարսկաստանում հազարապետն ուներ արքունիքում բարձրագույն պաշտոն։ Այդ մասին որոշակի պատկերացում է տալիս Դիոդորոս Սիկիլիացու հետևյալ հաղորդումը. «Քանի որ նա (Արտաքսերքսես Օքոսը—Ս. Կ.) իր խիստ վարվեցողությամբ ատելի էր դարձել, հազարապետ Բադոսը, որը... նենգինի էր, բայց... խորամանկ ու ռազմասեր, ...սպանեց Օքոսին և թագավորությունը հանձնեց արքայի ամենակրտսեր որդուն՝ Արսեսին։ Նա... ոչնչացրեց նաև (նոր) թագավորի եղբայրներին, ...որպեսզի պատանի (թագավորը) մեկուսացած լինելով,

19 Մովսես Խորենացի, էջ 108—118։
20 Նույն տեղում, էջ 133։
21 Նույն տեղում, էջ 174։
22 Նույն տեղում։
23 Նույն տեղում, էջ 224, 228։

իրեն առավել հպատակվի։ Բայց պատանին... պատրաստվում էր պատժել ոճիրների հեղինակին. ուստի և Բագոասը, լսելով նրա մտադրությունը, սպանեց Արսեսին և նրա որդիներին... Այսպիսով, քանի որ արքունի տոհմը ոչնչացվել էր և ուղիղ գծով ոչ ոք չէր մնացել իշխանությունը ժառանգելու համար, Բագոասը նախընտրեց արքունիքին մոտիկ մարդկանցից մեկին, Դարեհ անունով և նրան դարձրեց թագավոր»[24]։

Իրանագետ Ռ. Ֆրայը նշում է, որ «վերջին Աքեմենյանների օրոք հազարապետը... սկսեց կատարել վարչապետին մոտ պաշտոն։ ...Հազարապետ տիտղոսը Աքեմենյանների օրոք կրում էր «հազար անմահների»՝ արքայի թիկնազորի պետը, որը դարձել էր արքունիքում կարևոր դեմք»[25]։

Հազարապետի պաշտոնը Հայաստանում հաստատապես վկայված է Արշակունիների վերջին հարյուրամյակի համար՝ IV դ. սկզբից մինչև թագավորության անկումը, ինչպես նաև հետագա՝ մարզպանական շրջանի համար։ Ինչ վերաբերում է նախորդ դարերին, ապա Մ. Խորենացու մոտ պահպանված վկայությունների ուշադիր քննությունը համոզում է, որ հազարապետի պաշտոնը Հայաստանում առկա էր նաև այդ ժամանակ։

Ճիշտ է, Մ. Խորենացին Վաղարշակի հաստատած նախարարությունները և պաշտոնները թվարկելիս չի հիշատակում հազարապետին և հազարապետությունը, սակայն, պատմահայրը խոսելով Արտաշեսի գործունեության մասին, նշում է, որ «կարգէ Արտաշէս զՎրոյր՝ հազարապետ, զայր իմաստուն և բանաստեղծ, և հաւատայ ի նա զամենայն գործս տանն արքունի»[26]։ Այնուհետև հազարապետը Հայաստանում հիշատակվում է Արշակունիների ժամանակ, IV դ. սկզբին։ Այսպես, Մ. Խորենացին հաղորդում է, թե՝ «Տրդատ ի հազարապետութիւն Հայոց զՕտայն կացուցանէ»[27]։ Ագաթանգեղոսը, սակայն, նույն այս Օտա Ամատունուն ամեն անգամ հիշատակում է որպես նախարար, բայց ոչ մի անգամ նրան չի անվանում հազարապետ[28]։ Թվում է, թե այնուհետև Հայաստանի հազարապետության պաշտոնը ժառանգաբար գտնվել է Ամատունյաց նահապետի ձեռքին։ Այս եզրակացությունը բխում է Մ. Խորենացու մատյանի համապատասխան հատվածներից։ Միակ բացառությունը Փավստոսի վկայությունն է, թե՝ «Սկիզբն գործակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին»[29]։

Հազարապետության մասին մեզ հասած վկայությունները հիմք չեն տալիս հայոց հազարապետին համարելու հազար հոգուց բաղկացած կամ մեկ այլ զորամասի հրամանատար։ Հազարապետի պաշտոնը Հայաստանում բարձրագույններից էր և այն վարում էր արքայի ամենավստահելի մերձավորներից մեկը։ Արտաշեսի ժամանակ հազարապետ էր կարգվել արքայորդի Վրույրը, որին և վստահված էին արքունի բոլոր գործերը։ Տրդատ Գ-ը հազա-

---

24 Diodor., XVII, 5, 3–6.

25 Р. Фрай, Наследие Ирана. М., 1972, էջ 139։

26 Մովսես Խորենացի, էջ 183։

27 Նույն տեղում, էջ 224։

28 «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 115։

29 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Ս. Պետերբուրգ, 1883, էջ 56։

բապետ է նշանակում Օտային, որը Տրդատի բացակայության ժամանակ սնուցել էր արքայադուստր Խոսրովիդուխտին և հավատարմությամբ պահպանել ամրոցը։ Ագաթանգեղոսը Օտային անվանում է ավագ նախարար[30]։ Իրավացի է Հ. Մանանդյանը, երբ գրում է. «Մեծ գործակալութիւն» էր նաև «հազարապետութիւն»-ը, որին հանձնարարված է եղել, հավանորեն, արքունի երկրի տնտեսական բարեկարգման և գյուղացիական ու ելևմտական գործերի վարչությունը։ «Հազարապետ»-ի պարտականությունն էր, ըստ երևույթին, աջակցել երկրի շինարարական աշխատանքներին և շինական տնտեսության զարգացմանը։ «Հազարապետութեան» այս պարտականությունները կապված էին հարկահանության գործի հետ։ Հողի մշակությունը, ոռոգման գործը և, ընդհանրապես, երկրի շեն վիճակը նշանակություն ունեին՝ իբրև հիմք և աղբյուր պետական բարեկեցության և պետական եկամուտների»[31]։

Հայագիտության մեջ մարդպետությունը ևս համարվել է կարևոր գործակալություններից մեկը։ Ընդգծենք, որ մարդպետությունը, հատկապես հայոց թագավորության առաջին շրջանում, եղել է ամենակարևոր գործակալությունը։

Ն. Ադոնցի կարծիքով՝ մարդպետ սկզբում նշանակել է մարդերի պետ, այն ցեղի, որը բնակվում էր Մարդաստանում։ Հետագայում մարդպետը դարձել է տոհմական տիտղոս, ինչպես ասպետը, մաղխազը և սպարապետը[32]։ Սակայն, սա միայն տիտղոսի ստուգաբանությունն է և ոչնչով չի պարզում այդ պաշտոնի բուն էությունը։ Մարդպետը մեր սկզբնաղբյուրներում կոչվում է նաև «Հայր»։ Ստ. Մալխասյանցն այդ առթիվ գրում է. ««Հայր» հատուկ անուն չէ, այլ ամեն մի ներքինապետի հարգական կոչում։ ...Այնպես որ «Հայր մարդպետ» բառերից ոչ մեկը մի անձի հատուկ անուն չէ, այլ ներքինապետի պաշտոնի հարգական անունը... Միայն մի ներքինապետի հատուկ անուն է պահպանել Փավստոսը։ Դա Դրաստամատն է, որին հիշում է նա Ե, է գլխում»[33]։ Ավելացնենք, որ Փավստոսը և Ամմիանոս Մարկելլինոսը պահպանել են մարդպետներից ևս մեկի անունը՝ Գղակ[34]։

Հայաստանում առաջին ներքինի Հայրին հիշատակում է Խորենացին, Վաղարշակի հաստատած նախարարությունների մասին խոսելիս և նշում, որ «ոչ գիտէ» թե սրա պատմությունը ինչպե՞ս և որտե՞ղ պատահեց[35]։ Փավստոսն, իր հերթին, նշում է, թե «այս գործակալութիւն և մարդպետութիւն, որում Հայրն կոչէին, ներքինեաց գործ լեալ էր և ի բնէ ժամանակաց թագաւորութեանն Արշակունոյ...»[36]։ Մ. Խորենացու և Փավստոսի վկայությունները ցույց են տալիս, թե մարդպետության պաշտոնը Հայաստանում գոյություն ուներ Արշակունյաց թագավորության առաջին տարիներից։

Իրոք, մարդպետության պաշտոնը Հայաստանում արդեն պիտի որ հաստատված լիներ մ. թ. ա. II դ. սկզբին, Արտաշես Ա-ի թագավորության ժամանակ, երբ հայոց թագավորի գերիշխանության տակ գտնվող ամբողջ տա-

30 Ագաթանգեղոս, նույն տեղում։

31 Հ. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, էջ 69։

32 Н. Адонц, Армения в эопху Юстиниана, стр. 319.

33 Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադ. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 318։

34 Ammianus Marcellinus, XXVI, 12,5, Փավստոս Բուզանդ, էջ 160, 170.

35 Մովսես Խորենացի, էջ 112։

36 Փավստոս Բուզանդ, էջ 173։

բածքը համարվում էր χώρα βασιλική—արքունի երկիր, ոստան։ Արտաշեսը Հայաստանի ամեն մի թիզ հողին տիրացել էր իր ախոյանի՝ Երվանդի, ինչպես նաև սահմանակից թագավորների դեմ մղած կռիվներից հետո։ Ուստի, նա կարող էր Հայաստանը համարել իր նիզակով նվաճված (δορίκτητος) երկիր։ Հետագայում, Հայաստանում նախարարական հողատիրության աճմանը զուգընթաց, աստիճանաբար կրճատվում է արքունի ոստանը և այն. հիմնականում, սահմանափակվում է Այրարատյան աշխարհով։

Հայր մարդպետներին է հանձնարարված եղել հայոց թագավորի կանանոցի, ինչպես նաև արքունիքի վերակացությունը, թագավորական ամրությունների և բերդերի պահպանությունը, արքունի գանձերի ու կալվածների վերահսկողությունը[37]։ Այս հանգամանքով էլ պայմանավորված էր մարդպետի հեղինակությունը երկրի պետական կյանքում, հատկապես հայկական թագավորության առավել վաղ շրջանում, երբ տերության ամբողջ տարածքը դարձել էր արքունի երկիր, իսկ վերահսկողությունն այդ ամբողջ երկրի վրա հանձնված էր մարդպետին։ Արշակունիների թագավորության վերջին հարյուրամյակում, արքունի երկրի աստիճանական կրճատմանը զուգընթաց, բնական է, աստիճանաբար խախտվում էր Հայր մարդպետի կշիռն ու հեղինակությունը։ Բայց նույնիսկ նման պայմաններում, Փավստոսի վկայությամբ, Հայր մարդպետ Դրաստամատի բարձը «ի վեր քան զամենայն նախարարացն»[38]։ Իսկ ինչպե՞ս էր կրճատվում արքունի երկիրը։

Հայոց թագավորը որևէ մեկին պաշտոն հանձնարարելիս կամ մի նոր գործակալություն հաստատելիս, նոր պաշտոնյային կամ գործակալին պարգևում էր արքունի երկրից որևէ մաս։ Թագավորներն ընդարձակ հողեր նվիրաբերում էին նաև տաճարներին ու նրանց սպասավորներին։ Եվ ահա IV դ. կեսերին ստացվել էր այնպիսի վիճակ, երբ արքունի երկիրը շատ էր սահմանափակվել. հանգամանք, որը չէր կարող բացասաբար չանդրադառնալ մարդպետի հեղինակության վրա և չշոշափել նրա շահերը։ Ուստի և հասկանալի է, երբ Հայր մարդպետը նախատում է հայոց թագավորներին նման արարքի համար[39]։ IV դ. կեսերին, երբ երերվում էր հայ Արշակունիների գահը և արդեն հողատեր դարձած նախարարները դրսևորում էին կենտրոնախույս ձգտումներ, Հայր մարդպետը զորավիգ էր լինում արքայի կենտրոնաձիգ իշխանության։

IV դ. մարդպետության ունեցած քաղաքական խոշոր դերը մատնանշել է դեռևս Յ. Մարկվարտը։ Նրա կարծիքով, մարդպետները, իբրև արքունի գործակալներ, ձգտել են ամրապնդել հայ Արշակունիների հզորությունը և ստեղծել ուժեղ թագավորական իշխանություն։ Նրանք ամեն կերպ աշխատել են թուլացնել կենտրոնախույս նախարարությունները[40]։ Այս կարծիքին չի առարկում նաև Հ. Մանանդյանը[41]։

Մարդպետական իշխանության էությունը բացատրելու համար հայագետները հատուկ ուշադրություն են դարձրել Փավստոսի մոտ հանդիպող

---

37 Հ. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 64։

38 Փավստոս Բուզանդ, էջ 173։

39 Նույն տեղում, էջ 97։

40 J. Markwart, Sudarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, էջ 58—70։

41 Հ. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 65։

«շրջէր ընդ մարդպետութիւնն իւր» և «զիւրով իշխանութեամբ շրջէր» արտահայտություններին[42]։ Ղ. Ինճիճյանը և Ն. Բյուզանդացին գտնում են, թե մարդպետների իշխանության տակ գտնված կալվածները Տարոնում մարդպետության սեփական երկիրն էին[43]։ Հ. Մանանդյանն այս տեսակետը համարում է անընդունելի և միանում Ա. Գարագաշյանի կարծիքին, որը ենթադրում է, թե հիշյալ կալվածներն արքունի տան շրջաններն էին, որոնք գտնվել են մարդպետների տեսչության տակ[44]։ Հ. Մանանդյանը եզրակացնում է, որ «ընդ մարդպետութիւնն իւր» և «զիւրով իշխանութեամբ» խոսքերի տակ պիտի հասկանալ մարդպետների ոչ թե տանուտիրական, այլ գործակալական իշխանությունը[45]։

Հայաստանում կարևոր գործակալություն էր նաև մաղխազությունը։ Դեռևս Ն. Ադոնցը ցույց է տվել, որ «մաղխազ» (ասոր. malxazu) նշանակում է «տեր, իշխան, թագավոր»[46]։ Մաղխազը պատասխանատու էր թագավորի անձի պաշտպանության համար և գլխավորում էր արքունի թիկնապահներին։ Մ. Խորենացու այն վկայությունից, թե Վաղարշակը հաստատում է «թիկնապահս իւր... ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ... և գլուխ նահապետութեան նոցա զՄաղխազ ոմն այր քաջ և սրտեայ»[47], հետևում է, որ մաղխազության առաջացումը կապված է հայկական թագավորության հաստատման առաջին իսկ շրջանի հետ և, որ այդ գործակալությունը վստահված է եղել Հայկազունի, այսինքն՝ հայկական հնագույն տոհմերից մեկի նահապետին։

Համաձայն Մ. Խորենացու հաղորդումների, ամենակարևոր գործակալությունը Հայաստանում պետք է եղած լիներ թագադիր ասպետությունը, որը ժառանգաբար հանձնարարված էր Բագրատունիներին։ «Նախ և առաջին,— գրում է պատմահայրը,— փոխարէն բարեաց հատուցանելով (Վաղարշակ—Ս. Կ.) առնն զօրաւորի և իմաստնոյ, որ ի Հրէիցն Շամբատայ Բագարատ, տալով նմա իշխանութիւն ազգաւ թագադիր լինել Արշակունեաց»։ Երկրորդ անգամ Խորենացին գրում է. «Արդ՝ նախ և առաջին օրինադրէ թագաւորն (Վաղարշակ—Ս. Կ.) զինքը և զտուն իւր, սկիզբն առնելով ի գլխոյ իւրմէ և ի թագէ։ Եւ զկոչեցեալն Բագարատ, որ ի Հրէիցն, շնորհակալութիւն նմա վասն յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեան առ թագաւորն և միամտութեանն և քաջութեանն, զյառաջասացեալ տանուտիրական պատիւն ազգին պարգևելով. և իշխել նմա թագ ի գլուխ դնել թագաւորին, և կոչել թագադիր, այլ և ասպետ»։ Երրորդ անգամ Խորենացին հավաստում է. «Եւ աղերսեալ որ ի Հրէիցն Շամբատայ Բագարատ, որ և թագադիր և ասպետ»։ Եվ դարձյալ՝ «ոչինչ ընդհատ յայլոց պատուոյ տայ (Արտաշէս—Ս. Կ.) դայեկին իւրում Սմբատայ, բայց միայն յերկուց գնդեացն և ի կարմիր կօշկէ. և աւելի քան զհայրենական զիւր թագակապ ասպետութիւն և զիշխանութիւնն արև-

---

42 Փավստոս Բուզանդ, էջ 97, 160։

43 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 138, Նորայր Բյուզանդացի, Կորյուն վարդապետ և նորին թարգմանությունք, Տփղիս, 1910, էջ 268։

44 Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմություն հայոց, մ. Բ, Թիֆլիս, 1895, էջ 7 և 20։

45 Հ. Հ. Մանանդյան, նույն տեղում։

46 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 400։

47 Մովսես Խորենացի, էջ 110։

մտեայ զօրուն՝ հաւատայ և նա զամենայն զօրս Հայոց, և բոլոր աշխարհիս գործակալս և զհամօրէն տունն արքունի»[47ա]։

Արժեքավոր են նաև Ագաթանգեղոսի և Փավստոսի հետևյալ վկայությունները. «Ցայնժամ թագաւորն... գումարեաց զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բդեաշխն մեծ. երրորդ՝ իշխանն մարդպետութեանն, չորրորդ՝ իշխանն թագակապ ասպետութեանն...»։ «Առնոյր ընդ իւր (Տրդատ—Ս. Կ.) և ի զինուորական կողմանէն զչորէցսն իւրոյ տաճարին, որ բդեաշխքն կոչին. զառաջին՝ սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, և զերկրորդ՝ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, և զերրորդը՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն, զմեծ իշխանն Անգեղ տան, և զթագակիր ասպետն...»[47բ]։

Ագաթանգեղոսի հունարեն տարբերակում թագադիր ասպետին վերաբերող այս հատվածներում համապատասխանաբար կարդում ենք. „...ὁ τέταρτος ἄρχων ὁ τὸ διάδημα ἐξουσίαν ἔχων ἐπιδῆσαι τῷ βασιλεῖ ὁ λεγόμενος Ἀσπετῶν“ («Չորրորդ՝ իշխանը, որը թագավորի (գլխին) թագը կապելու իշխանություն ուներ, որը կոչվում էր Ասպետ»)։ „Καὶ τὸν στέφοντα τὸν βασιλέα ἄρχοντα, Ἀσπετ λεγόμενον“ (և թագավորին թագադրող իշխանին, որը կոչվում էր Ասպետ)[47գ]։

Փավստոսն իր հերթին վկայում է, որ «առնէր հարսանիս և եղբօր նորին Վաղարշակայ, և տայր նմա զդուստր ասպետին Բագրատունոյ, ...որ թագադիրքն (բնագրում՝ թագաւորքն) թագակապքն էին ի բնմէ ազգին թագաւորութեանն Արշակունոյ»[47դ]։

Ագաթանգեղոսի երկու հաղորդումներում էլ թագադիր ասպետը հիշատակված է գահերեց բդեշխներից հետո, առաջին իշխանների թվում. մի բան, որը վկայում է այդ պաշտոնն ունեցող անձի բարձր դիրքի մասին։ Սա համահնչուն է Խորենացու վերոհիշյալ հաղորդմանը։

Հայագետների համար եթե պարզ է եղել «թագադիր» տիտղոսի նշանակությունը, ապա Բագրատունու «ասպետ» տիտղոսի բացատրության շուրջ կան տարակարծիքներ։ Բառի ստուգաբանական բացատրությունը (ասպետ—հեծյալ իշխանավոր) դեռևս չի կարող բացահայտել այդ տիտղոսի էությունը։

Այս հարցում մենք պետք է հենվենք բացառապես մեր պատմիչների վերոհիշյալ վկայությունների վրա, որոնցում Բագրատունու պաշտոնը բնորոշված է իբրև «թագակապ ասպետութիւն» և «իշխանութիւն թագակապ ասպետութեան», իսկ Բագրատունին կրում է «թագադիր և ասպետ» կամ «թագադիր ասպետ» տիտղոսները։ Հետևաբար, ասպետությունը սերտորեն առնչվում էր թագադրի պաշտոնին և «թագադիր» ու «ասպետ» բառերով բնորոշվում էր նույն պաշտոնատար անձը։

Այս կարծիքի օգտին բերենք Խորենացու նաև այն վկայությունը, թե Զիրավի ճակատամարտում կրած պարտությունից հետո, երբ Մեհրուժան Արծրունին ընկնում է Սմբատ Բագրատունու ձեռքը, սա շիկացրած շամփուրը բո-

---

47ա Մովսես Խորենացի, էջ 104—105, 110, 118, 174։

47բ Ագաթանգեղոս, էջ 414, 459—460։

47գ „Agathangelus und die Akten Gregors von Armenien“, neu herausgegeben von Paul de Lagarde, Göttingen, 1887, S. 68. 83.

47դ Փավստոս Բուզանդ, էջ 216։

լորում է պսակի ձևով և դրանով պսակում Մեհրուժանին, ասելով. «...ինձ ասպետիս պարտ է ղքեզ պսակել ըստ սովորական իշխանութեան իմոյ հայրենեաց»[47]։ Մեկ այլ առիթով մենք նշել ենք, որ Բագրատունիները, հավանաբար, պատկանելիս են եղել քրմական դասին և հայոց թագավորին թագադրելու իրավունք ունեցող Բագրատունի ասպետը պետք է լիներ քրմապետ։ Հնարավոր է նաև, որ թագադրի «ասպետ» մակդիրը բխում է քրմապետի առանձին դորքեր ունենալու փաստից։

Մենք այս հինգ գործակալությունների մասին առանձին-առանձին խոսեցինք, ելնելով նրանց նշանակությունից և կատարած դերից։ Հիշյալ գործակալությունների առանձնակի դերը հայկական պետականության կյանքում երևվում է պատմիչների բազմաթիվ վկայություններից, ինչպես նաև «Գահնամակի» և «Զորանամակի» տվյալներից[48]։ Այս առումով առանձնապես պերճախոս են Ագաթանգեղոսի վկայությունները, որոնցում թվարկված են հայոց իշխանավորները։ Ագաթանգեղոսը, պատմելով, թե Տրդատը Գրիգորին ուղարկում է Կեսարիա եպիսկոպոս ձեռնադրվելու, թվարկում է նրան ուղեկցողներին։ Նա գրում է. «Ցայնժամ թագաւորն ...դումարեաց զգլխաւորս նախարարացն և զկուսակալս աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղձնեաց, որ է բդեաշխն մեծ, երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն, չորրորդ՝ իշխանն թագակալ իշխանութեան ասպետութեանն, հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան, զորավար Հայոց աշխարհին, վեցերորդ՝ իշխանն Կորդովտաց աշխարհին, եօթներորդ՝ իշխանն Ծոփաց աշխարհին, ութերորդ՝ իշխանն Գուգարացւոց աշխարհին, որ միւս անուանեալ բդեաշխն, իններորդ՝ իշխանն Ռշտունեաց աշխարհին, տասներորդ՝ իշխանն Մոկաց աշխարհին, մետասաներորդ՝ իշխանն Սիւնեաց աշխարհին, երկոտասաներորդ՝ իշխանն Ծաւդէից աշխարհին, երեքտասաներորդ՝ իշխանն Ուտիացւոց աշխարհին, չորեքտասաներորդ՝ իշխանն շահապ Զարաւանդ և Հեր գավառի, հնգետասաներորդ՝ իշխանն մաղխազութեան տանն, վեցտասաներորդ՝ իշխանն Արծրունեաց»[49]։ Ու դարձյալ «Եւ ի զինուորական կողմանէն՝ ղչորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ բդեաշխն կոչին. զառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, և զերկրորդ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանէն, և զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն. զմեծ իշխանն Անգեղ տան, և զիշխանն Սիւնեաց, և զիշխանն Ռշտունեաց, և զիշխանն Մաղխազութեան տանն, և զշահապն Շահապիւանի, և զիշխանն սպասկապետութեանն»[50]։

Նկատելի է, որ այս հատվածներում թագադիր ասպետը, մարդպետը, սպարապետը և մաղխազը հիշատակվում են իրենց զբաղեցրած պաշտոններով, մինչդեռ մյուսները՝ իրենց իշխանության տակ գտնվող երկրամասերի անուններով։ Այստեղից պիտի եզրակացնել, թե վերջիններս չէին զբաղեցնում արքունիքում որոշակի պաշտոն՝ գործակալություն, այլ հանդիսանում էին որոշակի տարածքի իշխան-կառավարիչներ։

47ե Մովսես Խորենացի, էջ 305։

48 «Գահնամակի» և «Զորանամակի» տվյալները մանրամասն վերլուծել է Ն. Ադոնցը («Армения в эпоху Юстиниана», էջ 236—297), ուստի և մենք չենք անդրադառնում այդ վավերագրերին։

49 Ագաթանգեղոս, էջ 414։

50 Նույն տեղում, էջ 459—460։

Խնդրո առարկա ժամանակաշրջանում, Հայաստանում, բացի վերոհիշյալ մի քանի կարևորագույն գործակալություններից, գոյություն են ունեցել նաև աղբյուրներում վկայված և չվկայված տարբեր պաշտոններ։ Մ. Խորենացին վկայում է, որ Վաղարշակն իրեն զգեստներ հագցնող նշանակեց Դնթունի Զեռեսին, արքունական որսերի վրա՝ Դատին, ձիերի երամակների վրա՝ Գաբաղին, սեղանատան սպասների և գահերի վրա՝ Աբելին։ Սպանդունիներին կարգեց սպանդանոցների վրա, Զյունականներին՝ ամառանոցների պահապաններ և ձյունակիրներ, Գնունիներին՝ գինի մատակարարողներ, իսկ Արծրունիները թագավորի առաջից պետք է արծիվներ տանեին[51]։ Հաջորդ գլխում Մ. Խորենացին պատմում է Մուրացյանների, Աղվանից Առանի, Գուդարաց բդեշխի, Անդեղյա Տորքի, Սլաք Սլկունու, Միանդակ Մանդակունու և այլոց այս կամ այն պաշտոնում նշանակված լինելու մասին։

Մ. Խորենացին այս կամ այն տոհմի անունից բխեցնում է այդ տոհմի նահապետի նշանակումը տվյալ պաշտոնին։ Այս երևույթն ինքնին կասկածի տակ է դնում Մ. Խորենացու՝ նշված հատվածի արժանահավատությունը։ Այսուհանդերձ, անկասկած է, որ թվարկված պաշտոնները վստահված էին բարձրատոհմիկ ազնվականության ներկայացուցիչներին

Մ. Խորենացու պատմության տվյալ գլուխներում թվարկված բոլոր պաշտոնները վերաբերում են թագավորի արքունիքին։ Բայց դա չի նշանակում, թե Հայաստանում այդ ժամանակ չկային նաև այնպիսի պետական պաշտոնյաներ, որոնք առնչվում էին երկրի տարբեր շրջանների և տնտեսության այս կամ այն ճյուղի հետ։ Այդ մասին չկան որոշակի տվյալներ։ Անկասկած է, սակայն, որ տեղերում կային արքունի հարկահավաքներ, աշխատանքային պարհակների կատարմանը հետևող գործակալներ և այլ բնույթի ստորին պաշտոնյաներ։ Քաղաքներում նշանակված են եղել վերակացուներ, իբրև թագավորական իշխանության ներկայացուցիչներ[52]։

Պետական ստորին պաշտոնները, հավանաբար, վստահված են եղել կրտսեր նախարարներին։ Հայ մատենագրության մեջ հիշատակվում են ավագ և կրտսեր նախարարներ[53]։ Արդ, ի՞նչ հատկանիշների հիման վրա նախարարները բաժանվում էին ավագների և կրտսերների։ Ղ. Ինճիճյանի կարծիքով. «...աւագ թուին կոչեցեալ նոքա՝ որոց մեծ էր կամ գործ կառավարութեան և կամ երկիր. իսկ կրտսեր նոքա՝ որոց փոքր էր պաշտոն և կամ երկիր»[54]։ Ըստ Կ. Կոստանյանցի, ավագ էին այն նախարարները, որոնք հայոց ամենահին ազնվական կամ նահապետական ցեղերից էին առաջացել. իսկ կրտսեր էին նրանք, որոնց նախահայրերը հասարակ ծագում են ունեցել և նախարարություն ստացել են թագավորներից՝ իրենց մատուցած ծառայության կամ հավատարմության դիմաց[55]։ Նույն այս բացատրությունն է տալիս նաև Մ. Էմինը[56], Կ. Կոստանյանցը դարձյալ անդրադառնալով այս հարցին, նշում է, թե

---

51 Մովսես Խորենացի, էջ 110—111։

52 Հմմտ. Մովսես Խորենացի, էջ 259, 287։

53 Մովսես Խորենացի, էջ 197, 323, «Եղիշէ վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին», Վենետիկ, 1864, էջ 343 և 354, «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեանս», Տփղիս, 1904, էջ 49։

54 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 90։

55 Կ. Կոստանյանց, Հյուսվածք, գիրք Գ, Վիեննա, 1877, էջ 28—29։

56 Н. Эмин, История Армении Моисея Хоренского новый перевод, М., 1893. стр. 298.

«յուրաքանչյուր նախարարության մեջ կար ավագ նախարար՝ տանուտերը, և կրտսեր նախարար՝ սեպուհները»[57]։ Նկատելի է, որ Կ. Կոստանյանցի այս երկու տեսակետները համերաշխ չեն իրար։

Ն. Ադոնցի կարծիքով, Հայաստանում նախարարները համարվել են ավագ կամ կրտսեր իրենց հզորության և կարևորության համեմատ[58]։

Խ. Սամվելյանը գտնում է, որ ավագ և կրտսեր նախարարների տարբերիչ հատկանիշը «տոհմային ծագման հնությունն է և ազնվազարմությունը, նմանապես տարածքային հզորությունը։ Հետևապես, «ավագ» մակդիրը վերաբերում է ոչ թե առանձին անհատներին, այլ ամբողջական տոհմին՝ սոցիալական առումով։ ...Կրտսեր նախարարներ պետք է համարվեին... նրանք, ովքեր իրենց ազնվազարմ ծագումով և հողային հարստությամբ սոցիալական ու քաղաքական մեծ նշանակություն չէին ներկայացնում...»[59]։

Հ. Մանանդյանը անհիմն և անհավանական է համարում Կ. Կոստանյանցի և Մ. Էմինի կռահումը։ Նրա կարծիքով, նախարարությունների բաժանումը «ավագ» և «կրտսեր» խմբերի, ինչպես մատնանշել է Ի. Ջավախովը[60], բավարար կերպով լուսաբանված է Ղ. Փարպեցու մի վկայության մեջ։ Նրա պատմելով, Վարդան Մամիկոնյանը պարսից արքունիքում արտասանած իր ճառում ի միջի այլոց ասում է. «...բազում են յայս երից աշխարհաց յազատորեարոյ, որք են աւագ քան զիս և գահու և աւուրբք»[61]։ Ուստի ավագ են համարվել նախարարները կամ «գահու» և կամ «աւուրբք»[62]։ Առավել ճիշտ է Հ. Մանանդյանի հաջորդ եզրակացությունը, թե «աւագների խմբին են պատկանել այն հզոր ու առաջնակարգ տոհմերի ներկայացուցիչները, որոնք «գահերեց» էին, իսկ «կրտսեր»՝ նրանք, որոնց դահերը եղել են երկրորդական կարգի»[63]։ Այս դեպքում Հ. Մանանդյանը համերաշխ է Ղ. Ինճիճյանի, Ն. Ադոնցի և Խ. Սամվելյանի տեսակետին։

Հայկական աղբյուրներում, որոնք պատկերում են IV—V դդ. Հայաստանը, բազմաթիվ հաղորդումներ կան նախարարության գլուխ կանգնած անձնավորության մասին, որը կոչվում էր. «տանուտէր», «տէր» կամ «նահապետ»։ Հ. Մանանդյանն իր ուսումնասիրության մեջ թվում է այդ հարցին առնչվող մատենագրական կարևորագույն վկայությունները[64]։ Մեր նպատակից դուրս է խոսել այդ տերմինների ծագման և ստուգաբանության մասին։ Մեզ, տվյալ դեպքում, հետաքրքրում է այդ տիտղոսը կրողների տեղը Հայաստանի պետական ապարատում։ Այս առթիվ հայտնված տարբեր կարծիքներից առավել ճիշտ է Ղ. Ինճիճյանի բացատրությունը, թե՝ տեր, տանուտեր կամ նահապետ. «...կոչէր նա՝ որ գլխաւոր էր իւրաքանչիւր տոհմի նախարարութեան, ...յորոյ ի ձեռին էր տէրութիւն երկրի նոյն տոհմին, ևս և տէրու-

57 Կ. Կոստանյանց, նույն տեղում։

58 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 453։

59 Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 210—211։

60 И. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, СПб., 1905, стр. 110.

61 Ղազար Փարպեցի, նույն տեղում։

62 Հ. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 42։

63 Նույն տեղում, էջ 43։

64 Նույն տեղում, էջ 48—49։

թիւն ի վերայ զօրաց այնր տոհմի»[65]։ Այս բացատրությանը համամիտ են Ի. Ջավախովը և Հ. Մանանդյանը[66]։ Նախարարը ոչ միայն իր տոհմի նահապետն էր, տանուտերը, այլև իրեն որպես տերություն վստահված նախարարության իշխանը, կառավարիչը[67]։

Հայագետները, ընդհանրապես, այն կարծիքի են, թե նախարարությունները առաջացել են շատ հնում, տոհմային կարգերի հիման վրա, երբ տոհմի առաջնորդը դարձել է տվյալ երկրամասի ժառանգական տերը և կառավարիչը[68]։ Մեր կարծիքով, նախարարությունները, որպես պետական իշխանության կարևորագույն օղակներ, Հայաստանում առաջացել են հայկական պետականության կազմավորմանը զուգընթաց, երբ հայոց թագավորը ավագանու այս կամ այն ներկայացուցչին հանձնարարում էր որևէ երկրամասի կառավարումը։ Հետագայում նկատվում է նախարարությունների առաջացման մի երկրորդ ուղի ևս։ Թագավորն իրեն հատուկ ծառայություն մատուցած իր մերձավորներին հատուցելու նպատակով նրանց դասում էր նախարարությունների շարքը։

Իրենց պարտականությունների կատարման տեսակետից Հայաստանում նախարարները բաժանվել են երեք խմբի. 1) Նախարարներ, որոնք պարտավոր էին հոգալ արքունի տնտեսության տարբեր ճյուղերի մատակարարումը։ 2) Նախարարներ, որոնք տարբեր պաշտոններ էին վարում արքունի դռանը։ 3) Նախարարներ, որոնք հայոց թագավորի հանձնարարությամբ երկրի տարբեր մասերում վարում էին վարչա-ռազմական զանազան պաշտոններ[69]։ Նախարարների պարտականությունների մեջ կարևոր տեղ էր գրավում և այն, որ պատերազմի ժամանակ, թագավորի պահանջով, նրանք պետք է իրենց դումարած զորամասերով ներկայանային պետության պաշտպանության համար։

Այսպիսով, Հայաստանում նախարարական հաստատությունն իր առաջացումից մինչև հայ մատենագրության մեջ նրա մասին գրանցված առաջին տեղեկությունները, կրել է խոշոր փոփոխություններ, երկրի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման համապատասխան։ Հարյուրամյակների ընթացքում տեղի ունեցած այդ փոփոխությունների կորագծի երկու ծայրերում կանգնած է նախարարը՝ որպես թագավորի նշանակած պետական բարձր պաշտոնյա, գործակալ (իսկ նախարարությունը որպես նշանակովի պաշտոն՝ գործակալություն) և նախարարը՝ որպես որոշակի տարածքի ժառանգական հողատեր, հայոց թագավորից ունեցած վասալական կախվածությամբ հանդերձ։

---

65 Ղ. Ինճիճյան, նշվ. աշխ., էջ 78։

66 И. Джавахов, նշվ. աշխ., էջ 100—109, Հ. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 47—48։

67 Փավստոս Բուզանդ, էջ 8—9, 201։ Ղազար Փարպեցի, էջ 18, 85։

68 И. Джавахов, նշվ. աշխ., էջ 111—115, Н. Адонц, նշվ. աշխ., էջ 400—410, Հ. Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 46—50։

69 Հմմտ. Ս. Սամվելյան, նշվ. աշխ., էջ 215։

НАХАРАРЫ И НАХАРАРСТВА В ДРЕВНЕЙ АРМЕНИИ

СИМОН КРКЯШАРЯН

Резюме

В древней Армении нахарарский институт является важной формой организации социально-экономической и политической жизни. Наличие нахарарской организации свидетельствует о разделении власти между царем и окружающей его верхушкой. Вначале в Армении высшие должности не были твердо дифференцированными. При армянских же Аршакидах государственные должности подвергались определенному разделению между разными нахарарскими домами.

Нахарарства как важнейшие звенья государственной власти возникли параллельно с образованием армянского государства, когда армянский царь поручал тому или иному представителю знати управление определенной областью. Позднее за услуги царь причислял своих приближенных к нахарарскому сословию.

Нахарарский институт в Армении претерпел большие изменения в соответствии с развитием производительных сил и производственных отношений страны. На обоих концах кривой этих изменений стоят, с одной стороны, нахарар как назначенное царем высокопоставленное лицо, а с другой — нахарар как землевладелец определенной территории, находящийся в вассальной зависимости от царя.